

# Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԽԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես Բազմ. 1925, էջ 189)

## ՃԻԲ.

Հրաժեշտ առած է այլևս Արրահամ Պատրիարք Հոովմէն։ Անոր բաժանունն այսպէս կը տեղեկագրուի կարապետ անուն անձէ մը առ Միւրիմար. « Ի յուլիսի 11ին « զկնի գԳ ժամուն աւուր հինգշաբթի, ճանապարհեցաւ աստի Գ արապայով Գեւ. « յարգելի Հոգեւոր տէրն. և ընդ նմին եղեալքն են սոքին. Գերապայծառ սահակ « եպիսկոպոսն, Եւգինէոս եպիսկոպոսն, վերապատուելի տէր մատիրոսն, տէր Նիկո. « զոսն, տէր անտոնն և Էնկիրցի մանուկն առ ի զնալ յալիկունա » (Գր. 13 Յունիս « 1743, Հոովմ)։

Նամակս յատուկ ծանուցագիր մըն է նկատմամբ տէր Նիկողայոսի՝ որ լիովն նոյի (Սլիկունա) մէջ անհաւատարիմ կը գտնուի իւր պատրիարքին ու կը զատուի ի սպառ։

## Գերյարգելի և ամենայն գովուրեանց արժան եղորն իմոյ Աբբայ Հօրց Ողորմ

Յայտ լիցի սիրելագոյն եղբայրութեանդ. ահա նաւ մի պատրաստեցաւ յանկարծակի վճռանդէն որ զնայ ի յաղէքսանդրիեա. այնպէս գիտացի թէ աստուած պատրաստեաց օր վերփոխման կուսին. յետ պատարագին մտաք ի նաւ։ Եւ խնդրեմ յաղթօր ի սրբոյ Հասարակութենէ. բայց յոյժ վշտացոյց զիս կրօնաւոր տէ՛ր Նիկողայոսն, զի ապստամբեցաւ յուխին, և յանշատեցաւ յինէն առանց փորձութեան և անբաւական պատճառի. այս է միայն իւր իղձն որ շրջի սանձարձակ, երկիրն քրիստոնէից կամ յայլ տեղիս, զի զիտէ սակաւ տալիեանէրէն. բերի զհետ իմ իբր Թալքման. բնաւ օգուտ ոչ եղև այլ բազում վնաս. վասն որոյ խնդրի որ եթէ զայցէ առ ձեզ, գիտասլիք, ապստամբ և յուխտազանք է թէ կրօնին և թէ իւր կաթողիկոսին, և այսու կերպիւ ծանիցէք. և այս եղև ներկայութեամբ ստեփաննոս Վարդապետին և տէ՛ր յակոբին, զի նոքա շատ խրատեցին և ոչ ինչ օգտեցան, և այսպէս լրբութեամբ պատասխանեալ նոցա ասաց. Մի թէ դուք դատաւոր էք ի վերայ իմ. և հայրութիւնդ եւս շնորք արա հայրական խրատիւ մի թէ և զղձնայցէ և վարձն ի քրիստոսէ առցես. ամէն։ Եւ մի մոռանար գատապեալս ի լեառն զրիւ քով միւրիմարականաւ, և եթէ յիշեցեալ ապստամբն զայցէ առ ձեզ կամ յայլ տեղիս ծանոյ ինձ. ընդ յիս զինէոս եպիսկոպոսն ողջունէ զգերյարգելութիւնդ. հայր յանտօնն և տիրացու մանուկն զսղբ արջ համբուրեն, սահակ եպիսկոպոսն տկար է. ոչ կարէ մտանել ի նաւ. Թնայ ի յալիկունայ. գրեցաւ ներ նաւու ի ծովն նաւահանգստի. վերջացուցանեմ սիրով։

1743 Օգոստոսի 15

[Աւիկոնա]

Նուսատ ծառայ  
Պետրոս Կաթողիկոս Հայոց  
Հաստատեցեալ ի սրբոյ գահէն

## ՃԻԳ.

Ուրեմն Արքայազն Կարապետը Հոգևորական Կոլեջի 11-ին Լիվոռնոյ մեկնել է վերջ՝ կը թողու և զայն՝ ըստ մեր ներկայ թղթին՝ օգոստոսի 10-ին:

Այս անգամ Յովհաննէս պատկերահան սոյն Պատրիարքին ի Լիվոռնոյ անցուցած միամսեայ ժամանակի շրջանէն է որ տեղեկութիւններ կը հաղորդէ:

Նամակէս կ'իմանանք նաև Հոգևորական մէջ ըլլալիս զրաժ աղանդի մը ծագման առաջին լուրը, ինչպէս ակնարկ մ'ալ՝ կուսանի մը շուրջ լսուած սքանչելիքի մը վրայօր:

Գերապատուելի և գերյարգելի տերութեան քու՜մ յարգութեամբ և սեփաւ սիրով ողջոյն մատուցանեմ՝

... Կարծեմ լինալ իցեն Հոգևոր տիրոջ օգոստոսի 10 գնալն լիվոռնայու, նախ քան զգնալն երկու գիր զրեց ինձ, որովք ծանուցաներ թէ հրամանացդ զրաժ է նաև շնորհակալութիւն վասն պրեկին՝ թարգմանութեան և ընկալեալ է զպատասխանն: Եւս յայտ լիցի, նախ քան իւր հասանիլն լիվոռնայ, մոնսիոնէօր ասիման գրած է անդ թէ փափին աշտց անկեալ իբրեւ աքսորեալ ելաւ Հոսմայու, բայց ետոյ փափին գիրն հասանելով անդ. որ մեծ պատվով և սիրով զրաժ էր պատրիարքին, և տէր ակոբն որինակն առեալ տարածելով ամենայն ներհակքն արբերան ելեալ են. նաև յայտ լիցի որ իւր շաղկերտ հալէպցի տէր Նիկողայոսն զատեալ պատրիարքէն անդ Մաքսիմ է, թէպէտ ջանացի և աղաչեցի պատրիարքին թէ այս անձս չի մնայ երկիրն քրիստոնէից, զի սորա աստ մնալն նախատիք է անուան նոյն պատրիարքին և այլն. և յաժմս ասեմ թոյլտուութեամբ աստուծոյ եղև. կամք տեսնաւ օրհնեալ եղիցի:

Նախ քան պատրիարքին տեղէն գնալն լսեցաք, թէ միւսիմ օղին նափուի տեսած են, և պատրիարքն յոյժ ցաւեր այս բանիս վերայ, կարծեմ լինալ իցէ՞ք:

Եւս յայտ առնեմ, տեղս աղանդ իմի բոկոսեալ, և բոկոսեալ էր տարածիլ յոյժ ծածկաբար, բայց ետոյ ումեմ մեծատան աղախինն յայտնեաց սանթթիցօին որոյ գործակալքն մի և նոյն ժամի անկարծորեն բռնեցին զգլխավորս նոցին և ոմանք բախեան. և աղանդն էր այս, թէ սիրել զաստուած և զընկերս, ոչընչացուցանելով զայլս պատգամս աստուծոյ և եկեղեցեայ, և վերոյաստեցելոյն ամենայն որ հաւանութիւն տվողն պարտեր իւր արեամբն հանդերձ երդմամբ գրել:

Մօտերս ի վախճի միոյ մին կոյս մեռաւ, և նախապէս ճանաչելով զվարս նորին հրամանաւ կարտիւնալ վիճարին բացեալ գտին ի վերայ սրտին երեք կամ և այլ նշանք չարաբարանցայն քրիստոսի. եւ նոյն վախճի կուսանացն կամեցայ լսել...

Հասարակապէս ասեն թէ փափն առաջ քան զսուրբ աստուածածնայ ծնունդեան տօնն ի՞նչ կարտիւնալ առնելոց է...

Ամի տեսաւ 1743, Օգոստոսի 31  
[ ի Հոգևոր ]

Խոնարհագոյն ծառայ  
[ պատկերահան ] Յօհաննէս

## ՃԻԴ.

Հայ կաթողիկէ Նուիրապետութեան սկզբնական շրջանին վերաբերեալ պատմական ծանօթութիւններ և անցքեր կը լսենք Արքայազն - Պետրոսէ՝ իր անցած վայրերէն:

Քերչարգեղի եղբորդ իւնոյ Մխիթար աբբայ հօրդ  
Ողբում

[ Աղիքսանդրիա ] 1743 Միպտեմբեր 25

Յայտ լիցի վերոյգրեցելոյ զի ահա ողորմութեամբն Աստուծոյ հասաք և աղօթիք հասարակութեան ողջ և խաղաղ ի մեծ քաղաքն յաղէքսանդրիան, ի սեպտեմբերի 13. և առաջի գամ աստուծով ի վանքն մեր. բայց ոչ գիտացի թէ զինչ պատասխան գրեցեր ինձ զոր գրեցի ի յալիկօնայու, զի յանկարծակի պատրաստեցաւ նաւն ի մէջ Ե յաւուր գնալ դատարկ. և ես իբր ի յաստուծոյ պատրաստեցեալ համարեցայ և չուցի, ասելով թէ զնամ և տեսանեմ զորպիսութիւն ամենից իրաց վանքին և քաղաքին. եթէ հարկն պահանջէ առնիցեմ ըստ պիտոյից և օգտի: Բայց լուայ թագաւորն Գալիլոյ գրեաց իւր հրեշտակին թէ ի հարկէ պարտիս դարձուցանել զեկեղեցին Բերիոյ որպէս էրն, և միտ ղնել և օգնել Պետրոս կաթողիկոսին Հայոց նոր հաստատեցելոյ ի սրբոյ Գահէն. զի Սրբութիւնն գրեաց և խնդրեաց. և լիցի քեզ այս գործ հարկաւոր և յատուկ. բարի է յուսալ ի տէր, զի ի վերայ մեր երկրին Գ փաշայ բազում զօրք յարեան. յառաջ քան զպատերազմին Յ օր, սատակեցաւ փաշան որ էր զօրավազու ամենից զօրաց, և հոշէր սէլման փաշա իպն առմ, և բարձեալ տարան զգէշ մարմինն ի Գամասկոս, և զօրքն ամենայն ցրուեցան աստուծով և հանդարտեցաւ լեռոն Աստուծոյ զօրութեամբն ոչ կարէ ելանել բայց բազում նեղութիւն և քիստ կրէր երկիրն և ժողովուրդն, և այս մին զարմացման գործ և նշան եղև օրհնութեամբ և աղօթիք սուրբ փափին, ի լուր և ի տես ամենից ի լեռան քէսըրվան. ցուցանի, զի կոնտակն և ներողութիւնքն Վեհին թարք մանեցեալ արապերէն յառաջադէմ յղեցի ընդ տիրացու սիմաւոնիւ ի վանքն. հետս ի օգոստոսի 1.ն. կային անդ ի Բերիոյ հալածականք, յակբո եպիսկոպոսն բերիոյ, քա հանայք և ժողովուրդք փախստականք. լուր եղև բազմաց թէ օրհնութիւն և ներողութիւնք հասին ի վանքն յիսուսի փրկչին ի սրբոյ յաթոռոյն: Ժողովեցան բազումք ի տօնի ալլակեղպութեան ի վանքն վասն նոր ներողութեան և օրհնութեան կոնտակի սուրբ փափին, և երկիրն պաշարեցեալ ի չար զօրաց և իբրև կատարեցին զամենայն, ասէ քարոզատուն. Որովհետեւ այսքան օրհնութեամբ և պարգևօք լցոյց զմեզ զսրբազան փափն ի զանծուց սրբոյ եկեղեցւոյ, պարտիմ գոհանալ զաստուծոյ և շնորհակալ լինել ի սրբութենէն, և խնդրել ի յաստուծոյ, յաճումս սրբոյ հաւատոյ, շննումս հերեւ տիկնոսութեանց, բարձրաբացումս եկեղեցւոյ, միաբանութիւն թագաւորաց, և սրբոյ Վեհին երկարութիւն կենաց: Եւս աղօթիք սրբութեան և յաւուր շնորհիւ խնդրեմք ի յաստուծոյ ազատութիւն երկրին մերոյ ի չար և անօրէն մեղոյ, և ասեմք զիթմանիեայն յիսուսի փրկչին մերոյ ի խորոց սրտէ. Ներմեռանդութեամբ և լալիւ կատարեցին և արձակեցան. և յետ երկից ատուրց եկն աւետիս թէ չարն սատակեցաւ յանկարծ մահուամբ, որպէս յուլիանոս ցրուեցաւ զօրքն ամենայն և խաղաղացաւ երկիրն, որպէս էրէկն և եռանգին: Դարձեալ և այս թղտաբեր քահանայն է ի սպանեալ քաղաքէն, նոր յուղաւ գնաւ, զիս ի յուլտի ի Հոսմ, տեսի զսա շնորհաց<sup>1</sup>. . . . և հեզանգի: Խնդրեմ յիսուսէ զի հաստ(առուի) միասցէ սահակ եպիսկոպոսն, զինչոս եպիսկոպոսն, հայր անտօնն, հայր յովսէփն, հայր մատթէոսն որք ընդ իս են յաղօթս խնդրեն և ես ընդ նոցա, ողջ ի տէր ամէն

Պետրոս Ա. կաթողիկոս հայոց  
Հաստատեցալ ի սրբոյ Գահէն

1. Ասէ վերջ կայ ուրիշ անընթեանի բառ մը: